

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաշտունի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

ՀՀ Սյունիքի մարզի Տաշտուն գյուղական համայնքի (այսուհետ՝ Համայնք) ղեկավարը հայտարարում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի Տաշտունի գյուղապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) համայնքային ծառայության առաջատար մասնագետ-հաշվապահի (ծածկագիր 3.1-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1.Նշված պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթները՝

ա) Իրականացնում է աշխատակազմի հաշվապահական հաշվառման գործառույթները, կազմում է ֆինանսական հաշվետվությունները, ապահովում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջների կատարումը:

բ) Իր լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին ու ճիշտ կազմելու համար:

գ) Կատարում է Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները:

դ) Իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

2.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) Առնվազն միջնակարգ կրթություն,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, ՀՀ Համայնքային ծառայության մասին», ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ Իրավական ակտերի մասին», ՀՀ Հաշվապահական հաշվառման մասին», ՀՀ Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն , ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2013 թ-ի նոյեմբերի 11-ին ժամը 10:00-ին՝ Տաշտուն համայնքի գյուղապետարանի շենքում (փողոց 2 N 1) :

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձիք / այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Տաշտունի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

բ) տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աշխատակազմ կամ և ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-ից մինչև 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: **Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013թ-ի հոկտեմբերի 25-ը մինչև ժամը 18:00:**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթերը հանձնելու , լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմ(հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ.Տաշտուն, հեռ՝ 093 31 58 89) կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (հասցե՝ ՀՀ ք. Կապան, Գ. Նժդեհի 1.հեռ՝0285 23550):

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տաշտուն, փողոց 2 N 1
Հեռ..՝ +374 93 315889